


ԲԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԲԱՅՐԻ ՑԵՂԵՐ ԱՄԱՐԵՑԻՆ
ԽԶՊԵՍ ՀԵՂԵՐՆ ԱՎԱՋԻ ՄԵԶ
ԲԱՑՑ ԼԵՂԵՐՆՅԱՆ ԾՈՎԻՆ ՀԱՍԱԿ
ՄԵԽՈՌՈՄԱՍԱՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

ДУБЛЕТ

ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՀԱՏԻՔ ՀԱՅՈՒԱԾՆԵՐ
ՍՈՎԵՏՈՂԱՅ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ

A II 89372



Հ Ա Լ Ի պ

1946

Ց Պ Ա Ր Ա Ն Ա Ն Ի

Ահետու և ԵՐԱՔԵԱՆ, ՍԱԼԻՊԵ - ՀԱԼԵՅ

ԵՐԿՈՒ ԽԾՈՎՔ

Այս հրատակութիւնը կը ձգտի ուսանող նոր սերունդի մէջ մը-
տակիցը իրաւ հայրենասիրութիւնը, հաղորդակից ընելով զայն մեր հին,
նոր եւ ժամանակակից գրականութեան կարեւոր նուանումներուն:

Սովէս Հայաստանի մշակութային վերելքին հետ զուգընքաց՝ աւա-
կերտին ծանօթացումը նաև սովետանայ լեզուին եւ ուղագրութեան,
պիտի բերեն մեծագոյն նպաստը հայ ժողովուրդի միասնականութեան
ու համերաշխութեան ձգտումին: Վասահ ենք, որ այս ձեռնարկը հայ-
րենակարօս մեր նոր սերունդին սրտին պիտի խօսի եւ օգտակար պիտի
ըլլայ անոր մշաւոր ու հոգեկան զարգացման:

Այս գրեոյկը, յաջորդական մի քանի պրակեներով, պիտի ծառայէ
որպէս օժանդակ դասագիրք հայերէն լեզուի, մեր նախակրարաններու
ն. եւ Զ. կարգերուն համար: Համոզումն ունինք քէ անոնցմով պիտի
լեցուի կարեւոր բաց մը, տրուած ըլլալով որ մեր բարձրագոյն կարգե-
րուն այսոր ունեցած դասագիրերը չեն գոհացներ մեր օրերու պահանջքը:

Նույնի մամուլի կը յանձնենուի նաև «Հայոց Պատմութեան» յա-
տուկ առանձին գրեոյկ մը, ուր ամփոփուած պիտի ըլլայ հայ ժողովուր-
դի ազատագրական պայքարին եւ Սովետական Հայաստանի կերտումին
ու զարգացման պատմութիւնը:

ՀԱՅԵՊԱՀԱՅՑ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ

Տ Ն Օ Ր Է Ն Ն Ե Ր Ո Ւ Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

ԼԱՅՈՒՅ ԼԵԶՈՒՆ

Արի, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,
Մեր արտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար՝ հայոց լեզուն։
Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,
Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ հայոց լեզուն։
Նա առաջին կանչն է եղել գյուցազնական մեր նախահոր
Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն։
Քերթողահայր Խորենացուց մինչեւ Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երազ ու երգ ու ճանապարհ հայոց լեզուն։
Ալ մոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ զիշերներին
Կը կորչելինք, եթե ճամփին չըբոցկտար հայոց լեզուն։
Քանի՛ ցեղեր ցամաքեցին ինչպես հեղեղն ավազի մեջ
Բայց լենինյան ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն։
Այսօր Էլ նա բռնության դեմ փայլատակում է քարկացայտ և
Ճերոսական լեզուների հերոս եղբայր հայոց լեզուն։
Աւրեմըն եկ փառաբանենք, փայլեցնենք թրի նման,
Ար զրչնդա արեի տակ հայվետ պայծառ հայոց լեզուն։

ԲԱՌԱԵՐ

Արի՛.— Ե՞կ, եկուր, մօտ արի մօտեցիր, չուտ արի աճապարէ՛,
Քերթողահայր.— Հայր քերթողներու, այսինքն բանաստեղծներու առաջ
ջին հայ քերթողը։
Քուչակ.— (Նահապետ Քուչակ) յալտնի հայ աշուղք, ոք ապրած է ժի, և
ժջ. գարերուն։
Ամպրոպատունչ.— Փաթորկաշունչ, կատաղի։
Բարկացայտ.— Սաստիկ յուղուած, բարկացած, զայրացած։
Որ զբնիքայ.— (Զբնիքալ) զընդ ձայն հանել, մեռալի շերտի ձայն հանելը,
երբ կարծը բանով կը զարնեն։

ՄԵՐ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

Նվեր մեր ժողովրդական վկայի

«Սատունցի Դավիթ»ի հազարամյակին:

Ա.

ՄԵՐ հոյակապ հին վանքերի մուլթ խուցերում, մենության մեջ
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեղ,
Մի նշխարով, մի կում ջրով և նզնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագալաքի վըրա դժգույն—
Եղեռները, նախնիցները հորդաների արյունը ու տես,
Փլուզումը հայրենիքի և ոսոխի սուրը անկուշու:
Եվ ողբացին լալահառաչ դժխտմ բախտը ձայառատանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծո դատաստանի:

Բ.

ՄԵՐ գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օճախի շուրջը նստած՝
Գուսանները մեր խանդալից, առջևները գինի և հաց,
Վիշերգին հաղթանակը դյուցազների մեր մեծազոր
Եվ ծաղրեցին պարտությունը ոսոխների մեր բյուրավոր:
Եվ հյուսեցին պատմությունը հավերծացող ժողովուրդի,
Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի,
Տեսան շքեղ մեր ապագան, անընկճելի ազատ ողին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած թուր կայծակին:

Կում. — Մէկ անգամէն կուլ տալու քանակութեամբ հեղուկ, ումպի
ձգնուրիւն. — ձիգ լարելը, ուժերը լարելը, չանք դործ դնելը, լարուած
աշխատիլը, ճղնաւորի կեանք վարելը:

Մազաղար. — Հորթի, զառնուկի եւլն, կաշի, որ յատուկ մշակութեամբ կը
պատրաստուի վրան գրելու կամ տայելու համար:

Եղեռն. — Աղետ, օնիք:

Նախնիր. — Արիւնահեղութիւն, կոտորած, ջարդ:

Ճորդա. — Խօսքան, վայրի ամբոխ:

Արփենընուց. — Արեան ծարաւի, արիւն խմօզ, արիւնկզակ, արիւնարբու,
գաղանաբարոյ:

Գևիսնմ. — Զարարարոյ, զժնեայ, ժանտ, անդգամ, անազորոյն, անգութ:

Ալիպերգիլ. — Երգել պատմելով:

Յաւերժացող. — (Յաւերժանալ) յաւերժական, մշտնշենաւոր դառնալ, ան-
մահանալ:

Թուր կայծակին. — Կայծակի նման վայլատակող, հրաշալի հատու թուր
(սուր), Սասունցի Դաւիթին հօրը սուրը՝ զոր ան կապեց մէջքին, կը-
ւելու համար Մորայ Մելիքին դէմ:



Ա Բ Վ Ջ Տ Կ Վ

իմ Արարատ սուրբ սարը վես
Մեր նախահայր Հայկն է կարծես,
Որ թիկնել է ամպ ու շանթին,
Ու ծխում է հանց Նահապետ
Խաղաղության չիբուխն իր հին
Ու ամպն է ծուխ չիբուխ զլիխն:

Ծխում է լուռ բարձունքեն
Աչք է պահում իր թոռներին,
Դարեր հսկում որ չըրվեն
Ու կու չերքան աշխարհներին,
Ու հսկում է նրանց ճամբան՝
Օրորոցից մինչ գերեզման:

Ժպտում է նա՝ տեսնում է թե
Անց են ելնում օրորոցից
Թուխ, քաջորակ թոռներն իրա
Ու չարք դուրս վանում երկրից,
Դաշտ են ձգում խոփն արծաթյա
Ու ոսկի հաց պոկում քարից:

Խաղաղ է նա ու միշտ հպարտ
Թիկնած հնուց մեր երկնքին
Մեր նահապետ լեռն Արարատ
Լուռ ծխում է խաղաղության
Իմաստության չիբուխն իր հին,
Ու ժամանակն է ծուխ չիբուխն . . .

Ճամպ. — համան, պէս, ղերդ

Զիբուխ. — ծառի բարակ ճիւղ որ կը գործածուի ծիսպաղ, ծիսպաղ:

Եռու երալ. — կանառիլ, կլուսիլ:

Ռով. — ինչպէս առաջ այսպէս: Ա զայտականցա մաք ուկը ուկը
Պակամ են. — (Պակել) գրցնել, բաժնել: Յ այս պակամ զայտականցա մաք ուկը
գրչութիւն ունի պայման: Յ այս պակամ զայտականցա մաք ուկը
գրչութիւն ունի պայման: Յ այս պակամ զայտականցա մաք ուկը
գրչութիւն ունի պայման:


Խաչը ակնական կա սահմանը մարտա շնչը
Խաչը ակնական կա սահմանը մարտա շնչը

Բանակ պարագան նորական է առ օրինակ:
Բանակ պարագան նորական է առ օրինակ:

Բանակ պարագան նորական է առ օրինակ:
Բանակ պարագան նորական է առ օրինակ:

Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:
Յ այս պարագան նորական է առ օրինակ:

ՆԵՐԲՈՋ ԸՆՅԱՍՏԱՆԻՑ

Հողմեր եկան աշխարհացունց և հողմերից անդադրում
Փշվեցինք աստղերի պես ու ցրվեցինք աշխարհում,
Բայց երասխի ափին մնաց փոքրիկ մի հող՝ անառիկ,
Արև՝ մնաց աստղերի մեջ, մնաց հային հայրենիք:
Այդ դու էիր, հայոց արև, Սովետական Հայաստան,
Հոկտեմբերի չնչով ծնված մանուկ էիր, և սակայն
Հմբի արդեն հասակ առել, գարձել ես այր մի պարթե,
Եվ քո նորոգ ճանապարհի գա՞րն ես արդեն քառորդել:
. . . Փշվեցինք աստղերի պես, և դու ես մեզ արեսում,
Դու՝ միակ շեն օճախի ծուխ մեր հինավորց աշխարհում,
Դու խրճիթի լույս, մենավոր, գիշերային ճամբորդին,
Դու՝ տուն կանչող մայրական ձայն՝ հայ թափառիկ պանդուխտին:
Քո անունով ընկան ուզմիկ քո որդիները դաշտում,
Քո անունը կտրիճներիդ հեռուներից բերեց տուն.
Դու բանկ ես մեզ, որպես գրոշ ցողված արյամբ զոհերի,
Դու մոր նման նվիրական, դու՝ մանկան պես սիրելի.
Եվ աշխարհում հայի համար դու նոր մի լեառ սրբազն,
Դու կարոտի նո՞ր Արարատ, Սովետական Հայաստան . . . :

ՌԱՌԵՐ

Հողմ. — Օդ, որ աւելի կամ պակաս արագութեամբ կը տեղափոխուի տե-
ղէ մը ուրիշ տեղ, քամի, սիւք:
Անառիկ. — Ինչ որ կարելի չէ առնել, գրաւել, ամուր, անմատչելի:
Հոկտեմբեր. — Եակնարկէ 1917ի Հոկտեմբերին Ռուսիոյ մէջ տեղի ունեցած
սոցիալիստական յեղափոխութեան:
Պարեւ. — Յաղթանգամ, ուժեղ, քաջ:
Մընում ես — (Արեւել) արեւի պէս դուրս գալ ամպերու տակէն:
Թանիկ. — Սուր գինը մեծ, շատ արժող, արժեքաւոր:

ՀԱՅՔԵՆԵՔԻ ԿԱՆՉԵԼ

Այս առավոտ երկինքն հայոց ես տոնական, շքե՛զ տեսա,
Զմրան՝ հեքյալ դարձած տեսա, զմբուխտ դաշտեր, տանս զարուն...
Ասի — Մայթս է վաղաժամ, թէ մի հրաշք տեսիլ է սա, —
Ի՞նչ ծաղիկներ, ի՞նչ արքեցում, ի՞նչ այգաբաց իմ աշխարհում...
Ոսկի գոներ տեսա բացված ու կամաբներ վեհատեսիլ,
Արարատի հովիտը պերճ՝ սեղա՛ն տեսա ուրախության,
Ամպի գուլա տեսա փարված ճերմակ զահին մեծ Մասիսի,
Ասի — ուսկի՞ց հասար, ամպի՛կ, այս կատարը հավերժության:
— Բարի համբա՛զ եմ ես բերել, — պատասխանեց ամպիկը լո՛ւյս, —
Գալստյան լուր եղբայրներից, որ փոված են աշխարհով մեկ,
Քո հայորդի եղբայրներից, որ կարոտով օր սրտայույզ,
Տուն են գառնում՝ հայրենի հող, հայրենական ազատ եզերք...
Ուրախության նրանց վճիտ արցունքներն եմ կըրում իմ մեջ,
Այնքան երազ, կարոտու տենչ, այնքա՛ն սերեր, այնքա՛ն խլնդում,
Կյանք են գառնում հայ պանդուխտի բյուր դարերի իզձերն անշեշ,
Արդ Մասիսներ հիմա ծաղկեն Հայաստանի անմեռ սրտում...
Հիմա ես ի՞նչ խոսքեր ընտրեմ և ի՞նչ շունչ տամ իմ քնարին...
Տուն են գառնում աստեղական որդիները, հին նաիրի,
Թափառ որդիքը հալածված, անտուն ու որբ, անոթեան,
Որ արյուն են լացել դարեր, անհայրենիք, անհանգրվան...
Մի խոսք ունի մեր հին, մեր սուրբ, մեր ոսկելա՛ր հայոց լեզուն —
«Եղբայր» — այդ խոսքը վերին, ցողված սիրով, կարոտակեզ.
Եղբայր ենք մենք, մի լույս ունինք, մի սե՛ր ունինք, մի հաց,
մի ջուր,
Եղբայրաբար զբկում, զբգվում և եղբոր պես կանչում եմ ձեզ:
Վերադառնե՛ք... դարձեք դուք տուն, եկեք հողը ձեր ավետյաց.
Վերադառնե՛ք հեռուներից, ուր դարձել էք ցավին գերի,
Վերադառնե՛ք և դեն նետեք աստանդական ցուպը մաշված,

Թող ձեր ճակատն ամպակուտակ՝ հայրենի հովը համբուրի,
 իմ տարագիր բյուր եղբայրներ, իմ հարազատ, իմ սրտակից,
 Դարձեք Կյանքի հովիտը պերճ, անմահության հողը մեր հին,
 Վերադաբեք, գիրկո բաց է, աչքս թաց է ձեր կարութից,
 Սիրտս զրո՞շ լինի թող ձեր վերադա՛րծի ճանապարհին...
 Այս առաւտո երկինքն հայոց ես տոնական, չքե՞լ տեսա,
 Զմրան՝ հեքյաթ դարձած տեսա, զմբուխտ դաշտեր, տունն՝ գարուն...
 Ասի—, Մայիս է վաղաժամ, թէ մի հրաշք տեսի՛լ է սա,—
 Ի՞նչ ծաղիկներ, ի՞նչ արբեցում, ի՞նչ այգաբաց իմ աշխարհում:
 Եզ Արարատ լեռը տեսա հայրենական մեր ափերում...
 Ճակտին՝ աստղը մեր գալիքի և պսակը հայրենի տան.
 Կանչում էր նա որդիներին — գեպի արև, գեպի գարուն,—
 Ասի— հավերժ գալար մընաս, Սովետական իմ Հայաստան...

ԲԱ.ՌԵՐ

- Տեսիլ.**— Աստուծոյ կողմէ դրկուած երադ, որ կը պարունակէ պատգամ
համ առագայի գուշակութիւն:
- Փարված.**— (Փարի) փաթթուիւ, սիրով գիրկլնդիմառնուիւ
- Եաւերժութիւն.**— Յաւերժ՝ միշտ լլլալը, միշտ գոյութիւն ունենալը,
- մշտնչենաւորութիւն:
- Ս.Ասանդական.**— Այս ու այն կողմ ինկած, թափառական:
- Ս.Տօրեւան.**— առանց օթեւանի, առանց տունի մնացած, անտուն, ան-
պատուպար:
- Ս.Ծանօթրուան.**— Առանց կայանի, առանց կենալու:
- Ս.Աւետաց հոլ.**— Բարիքի խօստում տուած հոլ, երկիր, հոս կ'ակնարկէ
- Սովետ Հայաստանին որ կու տայ մեզ ընդունելու խօստում:
- Դէն նետէր.**— (Դէն նետել) այդ կողմ նետել:



ԶԱԳԱՅՈՒՅՑ ԵՒ ԱՐՁԱԿ ԽՕՍՔ

Գրական սահղծաղործութիւնը կ'ըլլայ երկու ձեւով, չափածոյ և արձակ։ Անոնց տարբերութիւնը և առանձնայատկութիւնը իսկոյն աչքին աչքի կ'իյնայ, եթէ համեմատենք իրարու հետ չափածոյ և արձակ սահղծաղործութեան մէկական նմոյշ՝ զրուած միեւնոյն նիւթով։ Ահա, օրինակ, Մ. Խորենացիի Հայոց Պատմութիւն չն ԱՆԳԵԼԱՅ ՏՈՐԹի մասին զրուած հատուածը և Ղ. Աղայեանի ՏՈՐԹ—ԱՆԳԵՂ. դիւցազնապոէմը։ Բովանդակութեամբ չատ նման են այդ երկու զրուածները, բայց իսկոյն աչքի կը զարնէ որ անոնք իրարմէ չատ տարրեր են իրենց ծեւով։ Խորենացիի զրածը արձակ է, իսկ Աղայեանի զրածը՝ չափածոյ կամ ոտանաւոր։

Չափածոյ կամ ոտանաւոր խօսքի հիմքը կը կազմէ ոփրմը կամ չափը։

Որիթմ կը կոչուի վանկերու որոշ չափին ու թուին, և շեշտերու կանոնաւոր ընթացքը, անոնց կանոնաւոր յաջորդականութիւնը։ Եթէ երգի կամ երաժշուութեան մէջ ոիթմը կ'արտայայտուի հնչիւններու որոշակի կանոնաւոր ընթացքին կամ յաջորդականութեան մէջ, ապա այդ նոյնը կայ նաեւ բանաստեղծութեան մէջ, ուր ութմը կ'արտայայտուի շեշտուած ու անշեշտ վանկերու կանոնաւոր յաջորդականութեամբ։ Ի հարկէ, արձակ խօսքի մէջ ոիթմ կայ, բայց անկանոն է, ազատ է, իսկ բանաստեղծութեան կամ ոտանաւորի մէջ ոիթմը կանոնաւորուած, չափուած է, և այդ պատճառով ալ ոտանաւորը կը կոչուի չափածոյ խօսք։

Համոզուելու համար, որ միեւնոյն նիւթի մասին պատմելու ատեն, արձակէ տարբերուելով՝ ոտանաւոր խօսքը կ'հնթարկուի ուրոշ կարգի ու չափի, բերենք մէկական հատուած Տորք-Անգեղի նկատմամբ գրուած արձակ և չափածոյ վերոյիշեալ գրութիւններէն։

Մ. ԽՈՐԵՆԱՅԻ

Տորքը մի տէեղ, բարձը,
կոպիտ կազմուածքով, տա-
փակ քթով, փոս ընկած
աչքերով, դժնէ հայեացքով
մարդ էր, որին սաստիկ
սպեղութեան պատճառով

Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ

Տորքը չէր նման հասարակ մարդու,
Այլ մի աժդակա և չատ ահարկու.
Աչքերը կարծես մի-մի կապոյտ ծով,
Ճաճանչաւորուած արեւի լոյսով։
Սեւ սեւ ունքերը մութ ամպի նման,
Բարդ-բարդ կուտակուած աչքերի վրան.

կոչում էին Անգեղեայ, «ը թիթը կորնթարթ, իբրեւ մի քլուր,
 վլթիսարի հասալ և ուժ Ատամներն ուրագ, եղունգները՝ թուր.
 ունէր»:
 ... երգում էին նրա մա- Մէջքը սարաժայու, կոները՝ զերան.
 սին, «ը իբր թէ ձեռք էր Մի խօսքով մի գեւ և ո՛չ թէ հսկա,
 զարնում սրծաքար ապա- Ո՛չ ոք տեսած չէր այնպէս աժդակա;
 ռաժներին, որոնց վրայ ոչ Տգեղ էր զէմքը և այնքա'ն դաժան,
 մի ճեղքուածք չկար, «ու- Որ զարհուրում էր ո՛վ նայում վրան.
 զածին պէս ճեղքում էր Ահռելի էր նա և այնքան ուժեղ,
 մեծ ու փոքր եղունգներով, Որ յիսուն զոմէշ չունէին մէկտեղ.
 նրանց վրայ զծում էր ար- Նա զեռ պատանի ժայռեր էր ճեղքում,
 ծիւներ և նման բաներ:
 Ճեղքում էր ճեռքով, ճեռքով էլ կոկում.
 Ճեղքում, յլկում էր քարէ տախտակներ,
 եղունգով փորում պէս-պէս նկարներ:

Նոյն բովանդակութիւնն ունեցող այս երկու հասուածներու
 մէջ տարբերութիւնը ակնյայտ է: Արձակի մէջ անշերս ու չէր-
 ւած վանկերու յաջորդականութիւնը անկանոն է, իսկ չափածոյի
 մէջ՝ կանոնաւոր:

Բաղդատեցէք Եհեադրութիւնը՝ հետեւեալ տողերուն —
 ա. — Զափածոյէն —

'Նա դե՛ռ պատահի՛ ժայռե՛ր եր նեղքո՛ւմ,
 Ճեղքո՛ւմ եր ձեռքն՝ ձեռքն՝ կլ կոկո՛ւմ:

բ. — Արձակէն —

Ձե՛ռք եր զարնո՛ւմ որձակա՛ր ապառածների՛ն
 Պայմանական ճեռով, եթէ չեշտուած վանկը նշանակենք |
 նշանով, իսկ անշեշտը — նշանով, ապա մենք կը տեսնենք անշեշտ
 ու չեշտուած վանկերու յաջորդականութեան ուրուագիծը՝ բաղդատ-
 ւած վերոգրեալ տողերու համար.

Զափածոյ. — — | — — | — | — — |

Արձակ. — | — — | — — | — — — |

Այս ուրուագիծը ցոյց կու տայ, «ը տրուած ոտանաւորի իւ-
 րաքանչիւր տողը բաղկացած է տասը վանկէ, և ամէն տողի մէջ,
 միեւնոյն կարգով, նոյն յաջորդականութեամբ չեշտուած են 2րդ, 5րդ,
 7րդ, և 10րդ վանկերը, իսկ միւս վանկերը անշեշտ են: Ահա չեշտը-
 ւած ու անշեշտ վանկերու այդ կանոնաւոր յաջորդականութիւնն է,

որ ոտանաւորի մէջ կը ստեղծէ ոիթմականութիւն, և երաժշտական կը զարձնէ ոտանաւոր խօսքը, իսկ ատոր չնորհիւ՝ աւելի հեշտ է միշել ու բերանացի լսել ոտանաւորը:

Շարունակելով համեմատութիւնը, մենք պիտի նկատենք՝ որ Աղայեանի Տորք - Անգեղ ոտանաւորի տողերը կը գերջանան նմանաւ հնչիւն վանկերով. այսպէս,

Կուրծքը կ'ասենաս մի լանջ և լեռան,
Մեջքը սարածայր, կոները գերան.

Կամ

Տգեղ եր դիմքը եւ այնքան դաժան,
Ու զարհութում եր ո՞վ նայում վրան.

Տողերու վերջը կրկնուող նմանահնչիւն վանկերը կը կոչուին յանով: Աւրեմն, չափածոյ խօսքը արձակէն կը տարբերի ոչ միայն ոիթմով, այլ և յանգով: Յանզը ոտանաւորին կու տայ սահունութիւն և երաժշտականութիւն:

Բայց յանզը պարտապիր չէ չափածովի՝ համար. կրնան ըլլալ ոտանաւորներ՝ նաեւ առանց յանզի, որոնք կը կոչուին անյանգ չափածոյ կամ անյանգ ոտանաւոր:

Դ. Աղայեանի Տորք - Անգեղ դիւցազնապոէմին բոլոր տողերը բաղկացած են տասական վանկէ և յանզաւորուած են: Աւրեմն, Տորք - Անգեղը չափածոյ, յանզաւոր զրուածք է:

Եթէ քննելու ըլլանք անոր բոլոր տողերու չեշտերու յաջորդականութիւնը, պիտի սեսնենք, որ թէեւ չէ պահպանուած չեշտերու նոյն յաջորդականութիւնը, բայց իւրաքանչիւր տող ճիշդ կէսէն, բաժնուած է երկու մասի (ամէն մաս հինգ վանկէ բաղկացած) այնպէս, որ արտասանելու կամ կարգալու ատեն կ'ունենանք կանոնաւոր ընդմիջում կամ կիսադադար. այսպէս:

Նա դեռ պատանի ծայռեր եր նեղիում,
Ճեղիում եր ճեռքով ճեռքով ել կոկում:

Այս ընդմիջումը, կամ կիսադադարը կը կոչուի հատած (=ցեղուրա), որոնց կանոնաւոր յաջորդականութիւնը կը յօրինէ ոիթմական միութիւն մը:

Հատած կամ ցեղուրան, նայելով իր գրութեան, կրնայ ըլլալ փոփոխական և հաստատուն:

ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆ, Զ. ՏԱՐԻ
(էջ 55—59)

ՀԱՅԿԻ ԵՒ ՔԵԼԻ ՊԱՏԵՐԱՋՄԸ

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր թիկնավետ, խիստ գանգուր մաղերով, վառվուռն աչքերով, հաստ բազուկներով։ Սա քաջ և երեվելի հանդիսացավ հսկաների մեջ, զիմազրող այս բոլորին, որոնք ձեռք են բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու։ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնության վրա, բազմամբուխ հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ։ Որովհետեւ այս ժամանակ ամեն մի մարդ, խելազարված, ուուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը զրավել։ Որին Հայկը չկամենալով հնազանդել, Բարեկոնում Սրամանցակ որդին ճնելուց հետո, չվեց զնաց Արարադի երկիրը, որ գըտընվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, զուստրներով և որդիների որդիներով, որ զորավոր մարդիկ էին, թվով մոտ երեքհարյուր հզիք, և ուրիշ ընդունեներով, նրան հարած եկվորներով և բոլոր տունուտեղով։ Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից։ Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածում շինում է բնակության տուն և տալիս է ժառանգություն կազմուին, Սրամանյակի որդուն։

Իսկ ինքը, իր մեացած մարդկանցով և տունուտեղով շարժը-վում է գեպի հյուսիսային արեւմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք...

Տիտանյան Բել իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց ուղարկում է հյուսիսի կողմը Հայկի մոտ, որ նա հնազանդության գա և խաղաղությամբ ապրի։ «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդելով խաղաղ ապրիր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»։ Հայկը Բելի պատգամավորներին հետ է դարձնում խնտությամբ

պատամաննելով։ Ուղարկված պատղամավորը վերադառնում է թաբելոն։

Այս ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա զեմ և հետեւակ զորքի մեծ բաղմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարագի երկիրը, Կաղմուխ տան մոտ։ Կաղմուխ փախուստ է տաշում Հայկի մոտ, իրենից առաջ արագազնաց մարդիկ ուղարկելով։ «Գիտցած եղիր, ասում է, ո՞վ մեծդ ոյուցազուների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա հավերժական քաջերով և երկնազեզ հասակով մըցող հսկաներով։ Եվ ես լսելով, որ նա մատեցել է իմ տանը՝ փախա և տհա տագնապած գալիս եմ քեզ մոտ։ Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես»։

Իսկ Բելը հանգուցն ու անձոռնի ամբոխի զորությամբ, ինչպես մի հեղեղ, որ զառիվայրից ներքեւ է վիճում, շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները, վասահ լինելով զորավոր մարդկանց որտերի և անձերի վրա։ Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հոկան, խիստ գանգուր մազելով հսկան, վառվուռն աչքերով, ըշտապում հավաքում է իր որդիներին և թոռներին, քաջ և ազեղնավոր մարդկանց, թվով շատ նվազ, և ուրիշ մարդկանց, որ ձեռքի տակ ուներ, զնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերն աղի են և մանր ձկներ են պարունակում։ Եվ իր զորքերը կանչելով՝ ասում է նրանց։ «Եթք մենք գուրս կդանք Բելի ամբոխի գեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խոռոն բաղմության մեջ, որպիսզի կամ մեռնենք և մեր աղլիս Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցըվի և մենք հազթություն տանենք»։

Եվ ամբողջ ասպարեզներ զեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձրագույն լեռների միջև մի գաշտածե տեղ։ Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր զիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը, Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրեւ գիտանցում... Հայկը տեսնելով պինդ սպառազինված Տիտանյանին և նրա աջ և ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով ձախ կողմը, որովհետեւ աղեղ և սուր զործածելու մեջ կորովի մարդիկ էին, ինքը կանգնեց առջելոց

մյուս բազմությունը կանգնեցրեց իր հետեւմ, դասավորեց մոռ
 տավորապես հոանկյունի ձևով և հանդարա առաջ շարժվեց:
 Երբ երկու կողմից հսկաներն իրար մոռ հասան, երկրի վրա
 ահազին զզրդյուն բարձրացրին իրենց դրոհներով և իրար վրա ահ
 ուսարսափ էին գցում իրենց հարձակումների ձևվերով: Այնտեղ եր-
 կու կողմից ոչ սակալ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդի-
 պելով թափալվում ընկնում էին գետին, և կոիմն անորոշ էր մը-
 նում, երկու կողմերն էլ անպարտելի մնալով: Այս անսպասելի
 տարակուսական գիտվածը տեսնելով՝ Տիտանյան արքան ըարհուրեց,
 և հետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջիլ էր,
 որովհետեւ մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչեւ բոլոր
 զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի:
 Աղեղնավոր Հայկը այս բանը հասկնալով՝ իրեն առաջ է նետում,
 մոտ է հասնում արքային, պինդ քարշում է լայնալիճ աղեղը, երեք-
 թեյան նետը գիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շիշ-
 տակի թափ անցնելով նրա թիկունքի միջնով: Գետին է խրվում:
 այս կերպով՝ ճոխացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գե-
 տին և շունչը փչում է: Խոկ ամբոխն այս քաջության ահազին
 գործը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած
 կողմը:

**«ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻՑ
 (5. բ ԴԱՐ)**

ԲԱՌԵՆՔ

Ընդունումով օտրաւկի, աղախինի որդի որ ձնած ու մեծ-
 ցած է աղնուականի ընտանիքի մէջ, և որ չօւնի տան բուն
 անդամներուն իրաւունքները:

Պատգամաւոր.— Ներկայացուցիչ, պատուիրակ, գեսպան

Տագնապիլ.— Խռովիլ, վրդովիլ, յուզուիլ:

Սողի.— Տամապետի հովանաւորութեան տակ ապրող, անոր գերդաստանը
 կաղմող մարդերու բազմութիւն:

Սոսպարեզ.— Ճամբաւ երկայնութեան չափ:

Հռոսակ.— Ասպատակ, մեծ ճամբաներու աւազակ:

Դիպրւած.— Դէպք, պատահաւ:

Լայնալին.— Լայն, մեծ:



ԱՅԱՍԹԵԼ

ԱՌԱՍՊԵԼը ժողովրդական բանաւոր ստեղծագործութեան ամենահին ձեւերէն է։ Առասպելի նիւթը բնութեան ու հասարակական կեանքի երեւոյթներն են՝ անիրական, երեւակայական պատկերումով։ Բոլոր ժողովուրդներն ալ ունին իրենց առասպելները, որոնք ստեղծուած են պատրութեան ամենավաղ շրջաններուն մէջ և անդրադարձած են բնութեան ոյժերուն, հասարակական կեանքի և պատմական անցքերու մասին ժողովուրդներու ունեցած երեւակայական պատկերացումներուն։

Առասպելներով չատ հարուստ է հին Յունաստանը։

Հայ ժողովուրդն ալ իր հնագարեան պատմութեան շրջանին ստեղծած է շարք մը առասպելներ, որոնք յետագային զրի առնուած են և մեզի հասած։ Այդ առասպելներէն է Հայկ և Բելի պատմութիւնը։ Առասպել է նաև այն, ինչ որ զրի առած է հայ հին պատմագիր Մովսէս Խորենացին՝ Անգեղեայ Տորքի մասին։ Ղազարսս Աղայեան իր ՏՈՐՔ ԱՆԳԵՂԸ զրելու ատեն օգտագործած է Խորենացիի պատմածը։

Առասպելի մէջ բնութեան տարերային ոյժերը կը մարդկայնացուին, իսկ հերոսներն ալ կ'օժտուին գերմարդկային երեւակայական ոյժով։ Եւ առասպելի հիմնական առանձնայատկութիւնն այն է, որ հերոսներու կեանքն ու պայքարը կը նկարագրուին ու կը պատկերացուին չափազանցութիւններով։ Առասպելի հերոսներն այնպիսի ոյժ ունին, և այնպիսի գործ կը կատարեն, որ իրական մարդու համար անհնարին են։

ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Զ. ՏԱՐԻ

(էջ 21—22)

A 11
89372



ՏՈՐՔ ԱՆԳԵԼ

Շատ դարեր առաջ հին Հայաստանում՝

Տորքը Անգեղ անվամբ մի մարդ էր կենում:

Տորքը չէր նման հասարակ մարդու, և այլ մի աժդահա և շատ ահարկու.

Աշքերը կարծես մի - մի կապույտ ծով,

Ճամանչավորված արեի լուսով.

Սև - սև հոնքերը, մութ ամպի նման,

Բարդ - բարդ կուտակված աչքերի վրան:

Կուրծքը կասենաս մի լանջ էր լեռան,

Մեջքը սարաժայու, կռները գերան,

Աճուելի էր նա և այնքան ուժեղ,

Որ հրառն զոմեց չունեին մեկ տեղ:

Նա մի հովիվ էր, հովիվ լեռնական,

Բայց ոչ հասարակ, այլ զյուցազնական,

Ոռյուծ ու վազը նրան տեսնելու՝

Սովոր շան նման մոտն էին գալիս,

Փաթաթվաւմ էին քաջի ոտներին

Եւ կաղկանձելով ազերսում բաժին.

Նա էլ տալիս էր սնունդ բավական

Եվ հոտի վրա կարգում պահապան:

Ինքն այնուհետեւ զնում էր անտառ,

Որ սնունդ գտնի իր ուժի համար:

Եվ նա բռնում էր, բռնոսում այսպես

Եղնիկ, եղնիրու, և այլ ինչ ասես:

Բան, երեսուն էրե շալակած,

Գնում էր հոտը հոգնած ու քրտնած:

(ՀՀ-12 31)

2

Մեկ անգամ գյուղում Տորքին զայրացրին,

«Անգեղ, զեց Անգեղ» նրան գոչեցին.

Էլ չհամբերեց. պոկեց մի մեծ ծառ,

Ավլեց նրանով ամբողջ զյուղն իսպառ,

Ասում եմ՝ ավլեց, չկարծեք սրբեց,
Այլ տուն, զոմ գետնին հավասարեցը եց:
Փախան մարդիկը ճանձերի նման,
Էլ ո՞վ կկանգներ Տորքին հանդիման:
Այսպես, երբ նըա բնությունն իմացան,
Էլ այնուհետեւ սրտին չդիպան,
Այլ մեծ հարգանքով պատուասիրեցին,
Պարերդ շինելով, զովաբանեցին.
Տղեք, աղջկեք՝ ձեռք-ձեռքի տված՝
Ե՛վ պարում էին, և' զովում Տորքին:
Էլ այնուհետեւ նըա դեմքն ահեղ
Առաջվա նման չէր թվում տգեղ,
Անգութ չէր Տորքը և ոչ էլ անգետ,
Լաւ որմասկիր էր և ճարտարապետ:
Ահազին վեմեր նա բերավ՝ տաշեց,
Իր քանդած զյուղը նորմեկանց չինեց:
Եվ այնուհետեւ իր ուժն ահազին
Նա գործ էր զնում միշտ դեպի բարին:
Նրանից առաջ շատ քաղաք ու զյուղ
Թալանում էին զողերն աներկյուղ.
Բայց երբ լույս ընկափ Անգեղ Տորք հսկան,
Ավագակները ծակուծուկ մտան:
Նո չէր գործ ածում ոչ թուր և ոչ նետ,
Միայն իր տեսքով անում էր անհետ.
Բայց երբ թշնամին երես էր առնում,
Նա այն ժամանակ ուժին էր զիմում.
Վերցնում էր քարեր, քարեր ահազին
Եվ կարկուտի պես թափում զլւներին:

ԹԱ.ՈՒ.ԵՐ

Աժդական.— Անձոռնի մեծութեամբ հրէշ, զեւ:

Քիւցազնական.— Քաջի, հերոսի նման:

Հանդիման.— Դիմացը:

Ճարտարապետ.— Եկնքի կառուցումը նախագձող:

Վ.Լ.մ.— Մեծ, հաստատուն, կարծը քար:

ՍԱՍԱԻՆՑԻ ՊԱՎՈՒԹՅՈՒՆ

10.

ԵՐԵՔ ԳԻՉԵՐ Ու ԵՐԵՔ ՕՐ
ՓԱՀԻՆ ԿԱՆԳՆԵց ամպի նման .
ԵՐԵՔ ԳԻՉԵՐ Ու ԵՐԵՔ ՕՐ
ԲՈՂԸ ՄՎՀԻՆ Դավիթի մահվան՝

ԵՐԲ ՕՐ ԱՆցավ ԵՐԵՔ ՕՐԸ ,
ԷՆ ԱՄՊԻ պէս կանգնած փողում
ԿԱՆԳՆԵց Դավիթի ինչպես սարը ,
Գրգուռ սարը մեդ - մշուշում :

— ՄԵԼԻՔ , — ասավ , — ո՞ւմն է հերթը ,
Սարսափ կալավ գոռ ՄԵԼԻՔԻՆ ,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռող հոգին :

ԳԻՆԱՅ , խորունկ մի հոր փորեց ,
Իջավ , մտավ վիհն էն խավար .
Վրան քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար :

ՄԱՆՀԱԼՈՎ ելավ տեղից
ԷՆ առյուծի առյուծ որդին ,
ԻՐ ձին հեծավ ու փոթորկեց ,
Խաղաց , շողաց թուր - կայծակին :

Առաջ վազեց մազերն արձակ
ՄԵԼԻՔԻ պառավ մայրը ջաղու .
— Դավիթ , մազս ա՛ս ոտիգ տակ ,
ԷԴ մի զարկը ինձ բաշխիր գոււ :

ԵՐԿՐՈՐԴ անգամ թուրը քաշեց .
Էս անգամ էլ եկավ քույրը .
— Դավիթ , եթե կուզես . — ԿԱՆՑԵց ,
Իմ որտին զարկ երկրորդ թուրը ...

Վերջին դարկի ժամը հասավ .
Գլուխ Դավիթ երրորդ անգամ .
— Ես մի զարկն ու ասոված , — ասավ , —
էլ մարդ չգտ , պիտք է որ տամ :

Ասավ , ելավ ու փոթորկեց ,
Թռավ , ցոլաց Դավիթի հուր ձին ,
Զին փոթորկեց , փայլատակեց
Ու ցած իշավ թուր - կայծակին :

Անցավ քառսուն գոմչի կաշին ,
Անցավ քառսուն քարերը ցած ,
Միջից կտրեց ժանտ հրեշին ,
Օխտը գազ էլ գենը գնաց :

— Կենգանի՛ եմ , մին էլ արե՛ ,
Գոռաց Մելիք հորի տակից :
Դավիթ լսեց , չատ զարմացավ
Փրեն զարկից , թուր կայծակից ...

— Մելի՛ք , ասավ , — թա՛փ տուր մի քեզ :
Ու թափ տվավ Մեղիքն իրեն ,
Միջից եղաւ ճիշտ երկու կես ,
Մեկն ընկավ գենն ու մյուսը՝ զեն :

Էս որ տեսավ Մորաքանակ ,
Զուր կտրվեց ահ ու վախից :
Դավիթ կանչեց . — Մի՛ վախենաք ,
Ականջ արե՞ք հզա գեռ ինձ :

Դուք ունչպար մարդիկ , — ասավ ,
Զուրկ ու խավար , քաղցած ու մերկ ,
Հազար ու մի կրակ ու ցավ ,
Հազար ու մի հոգսեր ունեք :

Ի՞նչ եք առել նետ ու աղեղ ,
Եկել թափել օտար դաշտեր .
Զէ՞՞ որ մենք էլ ունենք տուն - աեղ ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր ...

Զանձըաց՞լ եք իսաւաղ ու հաշտ
Հողագործի օր ու կյանքից,
Թե՞զ զզվել եք ձեր հանդ ու զաշտ,
Զեր հունձ ու փունչ, վար ու ցանքից։

Դարձե՛ք եկած ճանապարհով
Զեր հայրենի հողը Մսրա.
Բայց թե մին էլ զենք ու զռռով
Վեր եք կացել գուշք մեզ վրա,

Հորում լինեք քառսուն գաղ խոր,
Թե ջաղացի քարի տակին, —
Կելնեն ձեր գեմ, լնչպէս էսօր,
Մասմա Դավիթ, թուր - կայծակին։

ԲԱՅ.ՕՒԵՐ

Գոռ. — Հպարտու

Բոր. — Վատ լուրու

Ային. — Խոր փոս, անդունդ:

Խարազ (Խարջ). — Հարկ, տուբքու

Ծապան. — Ժայռերու միջեւ նեղ տարածութիւնը

Գաղ. — Երկարութեան չափ։



ՊԵՏՅԱՋՆԵՐԳՈՒԹԵՎ

Յովհաննէս թումանեանի Պատունցի Դաւիթը, Զ. Աղայեանի
Տորք - Անգելը և անոնց նման բանաստեղծական գրուածքներ դիւ-
ցազներգութիւններ են :

Դիիթանցներգութիւններ - Բառացիօրէն կը նշանակէ երդ - պատ-
մութեան դիւցազուններու, առասպելական ոյժի տէր հերոսներու
մասին :

Բանաստեղծները իրենց դիւցազներգական բնոյթով գրուածք-
ներուն նիւթը կը վերցնեն կամ ժողովրդական բանաւոր ստեղծա-
գործութենէ և կամ իրական պատմութենէ, մեծ մասամբ ժողո-
վուրդի պատմական անցեալէն : Օրինակ, Յ. Թումանեան իր Սա-
սունցի Դաւիթը գրելու համար օգտագործած է մեզմէ մօտ հազար
տարի առաջ ստեղծուած հայ ժողովրդի բանաւոր դիւցազներգա-
կան ստեղծագործութիւնը՝ Սասունցի Դաւիթի մասին, նուիրուած
անոր դիւցազնական կեանքին և հայրենասիրական քաջագործու-
թիւններուն :

Ինչպէս առասպելի, նոյնպէս և դիւցազներգութեան հերոսները
գերբնական ուժով ու կարողութեամբ օժտուած են : Բայց, եթէ
առասպելի հերոսները մեծ մասամբ անիրական երեւակական
են, ապա դիւցազներգութեան հերոսները, թէե յաճախ անուանա-
պէս կը նաև իրական չըլլալ, իրենց կեանքով ու գործունէութեամբ
կ'արտայայտեն իրական պատմական եղելութիւն, պատմութեամբ
յայտնի որոշ շրջանի մը մէջ : Բայց կան այնպիսի դիւցազներգու-
թիւններ, որոնց հերոսները իրական պատմական մեծ անձնաւո-
րութիւններ են և որոնց նիւթը բանաստեղծները ո՛չ թէ ժողովրդ-
գական բանաւոր ստեղծագործութենէ կը վերցնեն, այլ ուղղակի
պատմութենէ :

ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Զ. ՏԱՐԻ
(Ել 98—99)

ԱՌՅԱԽԾՆ, ԱՌՋԵՄՆ ՈՒ ԱՐՁԵ

Մի անգամ առյուծը հիվանդացավ, և բոլոր կենդանիները եւ կան նրան տեսության, բայց աղվեսն ուշացաւ: Արջն սկսեց բամբասուել ու չարախսուել աղվեսի մասին: Հենց այդ ժամանակ աղվեսը հասավ և դռան մոտ լսեց արջի չարախսուելն իր մասին: Աղվեսը ներս ընկավ ու փովեց առյուծի ոտքերի առջեւ:

Առյուծը չարացած ասաց.

— Վատ ժամանակ եկար, գարշելի արարած, ո՞ւր էիր մինչեւ այժմ:

Աղվեսը պատասխանեց.

— Ո՞վ հզոր առյուծ, իգուր ես բարկանում, քո զլիովն եմ երդգում, որ քո հիվանդության մասին լսելով՝ ես եղա բազմաթիվ բժիշկների և բժշկապետների մոտ, այդ պատճառով էլ ուշացաւ: Բայց իմ չարշարանքների պատուղն այն եղավ, որ իմացա, թե ո՞ն է քո բժշկության դեղը:

Առյուծը մեղմացավ և ասաց.

— Ա՞յս բարով ես եկել, գու իմաստուն կենդանի: իսկ ի՞նչ է այդ դեղը:

— Շատ պետքական ու հեշտ գեղ է, — պատասխանեց աղվեսը: Բժշկապետներն ինձ ասացին, թե պետք է կենդանի արջի մորթին հանել և տաք-տաք ցցել առյուծի վրա: Մորթին հիվանդի մարմնից խկույյն կքաշի, կհանի ցավը:

Առյուծի հրամանով անմիջապես բռնեցին արջին և սկսեցին մորթին հանել:

Արջը ա՛խ էր անում, վայ տալիս և գոռում ու սռնում սարսափելի ձայնով:

Այն ժամանակ աղվեսն առաց նրան.

— Տեղն է, զա գեռ քիչ է. այդպես պետք է վարվել քեզ հետ և նրանց հետ, ովքեր դուր չարախսում են:

ԲԱՌԵՐ

Չարախսել. — Մէկու մասին վատ բան ըսել:

Պետքական. — Դիտանի, օգտակար:

Ճես. — Դիւրին:

(12-81 13)

ԵՐԵՄԱՑ ԳԱՅԼԻ ԱՊԱՇԽԱՐՀԱՆՔԸ

Գայլը ծերացած զնում է հոտի մոտ և ասում է, թե այժմ եւ կել եմ ապաշխարհելու, որովհետեւ ձեզ շատ եմ տրտմեցրել և գըրա համար էլ ցանկանում եմ լինել ձեր տուն մաքրողը և ուրիշ գայլերից ձեր որդիներին պահողը, որպեսզի մեղքերիս թողություն լինի։ Եվ հոտը ուրախանալով, ասում է չներին՝ այլես մի՛ վսասեք նրան։

Գայլը մնում է հանգիստ մինչև գառներ են ծնվում, ապա սկսում է ուտել և պատռոտել զբանց մինչև շատերը տեսնում են սատկացնում նրան։

Առակս այսպիսի խրատ է տալիս, չհավատալ չարությանը վարչը վածած մարդկանց, չարութիւնը նրանց էությունն է։

ԽՆԿՈ ԱՊԵՐ

ԿԱՐԴԱՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Սև կարիճը լճի ափին տեսավ մի գորտ,

Ասավ. «Այ գորտ, ճարպիկ, լողորդ,

Ա՛ռ ինձ մեջքիդ աղբերաբար,

Ա՛ռ ու լճի էն ափը տար»։

Է՛ն ինչ գորտն էր

Քաջ լողորդն էր,

Շալակն առած սև կարիճին

Իրեն տվեց կապույտ լճին։

Բայց կարիճը խայթեց գորտին,

Խեզճը ջրում փովեց լերդին,

Ուշքը գնաց,

Նվազելով հա՛ կռկռաց—

— կարիճ...

Դակիճ...

Ես էլ կորա՛

Դու էլ կորար...

Ա՛ անկամորդ...

Ղորտ... զորտ... զո՞րտ..

— Բնությունն է այլպես, ա՛յ գորտ.

Թե չխայթեմ,

Ես կպայթեմ,—

Կարիճն ասաց,

Ինքն էլ խեղղվեց՝ ափ չհասած։

Ա Ռ Ծ Կ

ԱՌԱԿԱՆ ստեղծագործութեան մէջ առանձին տեսակ մըն է։ Մեծ մասամբ չափածոյ և իր բնոյթով կարճ բարոյախօսական պատմուածք է, արուած յարմար և ալտայալով զրոյցի միջոցաւ։

Առակագիր հեղինակը իր առակներով կը ծաղբէ մարդոց արատներն ու թերութիւնները և կը սորվեցնէ պայքարի այն ամէն բանի գէմ, որ չար է ու վեսակար։

Առակի պարունակած պատմութիւնը կը արուի շատ հակիրճ և պարզ ձեւով։ Գործող անձերը կ'ըլլան մեծ մասամբ վայրի և ընտանի կենդանիներ, թռչուններ, բոյսեր, մարդեր։ Նկարագրուող գործողութիւնը կը սկսի մէկ անգամէն, այսպէս։

Ծառի վրա երեք ձազ,
Խօկ աղուէսը երա տակ,
Պալրզել է ու լալիս...։
(Բարեսիրտ Աղուէսը)

Առակներուն մէջ կը ներկայացուին այնպիսի հերոսներ (մարդ, կենդանի թէ թռչուն), որոնք իրենց բնոյթով պարզ ու որոշ են, կամ դրական և կամ բացասական առումով։ Օրինակ, աղուէսը խորամանկ է ու չողոքորթ, գայլը զիշատիչ է, առիւծը հզօր է բայց ո'չ խելացի, ագռաւը յիմար է, գառնուկը թռյլ է և անպաշտպան։

Առակի մէջ այս հերոսներէն ամէն մէկը կը խօսի ու կը գործէ իր բնաւորութեան համապատասխան և իրեն յատուկ լեզուով։ Այսպէս, աղուէսը իր խորամանկութեամբ ու չողոքորթ լեզուով իրենց բոյնէն գուրս կը բերէ անտէր մնացած երեք անմեղ ձագերը և կ'ուտէ զանոնք (Բարեսիրտ Աղուէսը)։

Առակի իմաստը կամ բարոյախօսական միտքը հեղինակը կը յայտնէ կամ սկիզբը, նախ քան արուած պատմութեան սկսիր. եւ կամ վերջաւորութեան, պատմութիւնը աւարտելէ յետոյ։ Օրինակ, Գայլն ու Գառնուկը առակին միտքը յայտնուած է վերջաւորութեան։

Էստեղ ի՞նչն է զիխաւոր,
Ուժեղի մօս միջն էլ բոյլն է մեղաւոր..։

Առակը իր ծագումով կապուած է ժողովրդական բանաւոր ըստեղծագործութեան հետ և աւելի քան երկու հազար տարուան պատմութիւն ունի:

Հին Յունաստանի մէջ, որպէս առակագիր յայտնի եղած է Եղովբոս, որ կը համարուի առակագրութեան «Կայը»: Մըրանսայի մէջ յայտնի է Լա Ֆօնթէնը (1621—1695): Առուս առակագիրներէն յայտնի են Խեմիլյուրը (1745—1784), Խսմալովը (1779—1831) և ամենէն շատ՝ Կոլուվը (1768—1844), որուն առակներէն մեծ մասը թարգմանուած են հայերէնի:

Հայ գրականութեան մէջ, որպէս առակագիրներ յայտնի են Վարդան Այգեկցին, որ ապրած է մեղմէ մօտ 700 տարի առաջ 13րդ դարուն. ապա Խաչատուր Աբովյեան՝ իր ինքնուրոյն և թարգմանական առակներու գրքով, Պարապ Վախտի Խաղալիք վերնագրուած. Նաեւ Միսիթար Գոշը, Յովհաննէս Թումանեանը, Աւետիք Խսահակեանը և մանաւանդ Աթարէկ Խնկոյեանը (Ժնկո Ապեր) (1870—1935), որ առակներ գրած ու թարգմանած է յատկապէս մանուկներու համար:

ՀԱՅՐԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Ե. ՏԱՐԻ

(Էջ 125—127)



ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԵՐԵՑ, ՎԱՍԱԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

(Մի դրվագ ՎԱՐԴԱՆԱՆՔից)

Կոչնահարության ուժեղ ձայներ էին լսվում: Վասակը կանգնեցրեց նժույգը:

— Սա կջմիածնից չէ:

— Կջմիածնից է: — ասաց Գաղիշոն:

— Այնտեղ գնաց նա: Անշուշտ...

— Այո, նա այնտեղ գնաց:

Վասակը հուսահատ չարությամբ նայեց Գաղիշոնին:

— Ի՞նչ ուրեմն, նա պիտի ամբողջ հայ ազգը ստքել հանի: Ես Զարեհվանից պարսիկ զորք բերել կտամ:

— Հիմա՞ որ գործի անցար. — ասաց Գաղիշոն:

— Գնանք կջմիածնին, ես կարգիլեմ նրան խռովել երկիրը, դուրս կվանդեմ այն խելազար Երեցին: Նա էլ անշուշտ այնտեղ է:

Ու մինչ նրանք կմտնէին կջմիածնին՝ նրանց դիմաց դուրս եկավ մի հսկայական երթ ահազին բազմության, որի գլուխ էր անցել Ղեռնդ Երեցը: Հազար գլուխ վիշապի պես սողում էր նա վասակի դեմ սև ու թանձը: Այդ բազմահազար ամբոխը հավաքվել էր դաշտավայրի շեներից և ինչպես երեսում էր, գնում էր իր մեջն առնելու նորանոր շեներ: Դա այլևս հեղեղ էր, որի առաջն առնել չէր կարելի ոչ դեմից բռնելով նրան, ոչ կողքից քաշելով: Նա ծփում էր, հործում, մրմոռում և առաջ մակրնթացում՝ սպառնալով կործանել-տապալել ճանապարհին պատահած ամեն բան:

— Ո՞ւր ենք գնում, տեր մարզպան, — կանգնեցրեց իր նժույգը Գաղիշոն:

— Գնանք. — ասաց Վասակը տարորինակ անվեհերությամբ:

— Ամբոխը խելազարված է — ասաց Գաղիշոն, — հետ դառնանք, — օգուտ չունի:

— Գնանք, — պնդեց Վասակը գրգռված ու համառ ձայնով:

Նրանք առաջ գնացին: Վանքից այս կողմ այգիների միջև փոշոտ փողոցից դուրս խուժեց թնջկված ու մոլեզնած բազմությունը: Նրա առջևից գալիս էր Ղեռնդ Երեցը՝ խաչը բարձր բռնած, դեմքը հափշտակված ու կորովի: Հենց որ նա տեսավ մոտեցող Վասակին՝ մարզարեական շեշտով ձգեց.

— Տե՛ր Սյունյաց, տե՛ր մարզպան հայոց աշխարհի, հանդե՛ս

Է նահատակների հաղթանակ ողուր:

Երեցը մոլեգնեց, բոցավոռվեց, մասեցավ վասակին, բարձացըրեց ձեռքի խաչը և թափահարելով օգում նրա զեմ՝ գոչեց,

— Այս հավատից մեզ չեն կարող խախտել ոչ հրեշտակներ, ոչ մարդիկ, ոչ հուր, ոչ ջուր, և ոչ սուր...

— Աստված է մեզ զորավիզ, — մոնչաց բազմությունը և առաջանալով եկավ զեմ առաւ վասակին:

Հազարավոր զեմքեր այլայլված ու մոլեզնած սեփեռուն աչքեր գարձան դեպի նա և մի խառնաձայն որոտ պոռթկաց: Բազմությունը, որ խանդավառվել էր լըմբոստության կոչով և տեղեկություն չուներ վասակի հակառակության՝ քաջալերվեց, բորբոքվեց, ցույց արեց իր ընդդիմության կամքը, և ահա ձայներ բարձրացան այս ու այն կողմից.

— Տա՞ր մեզ նահատակության, տե՞ր մարզպան:

— Տա՞ր, տա՞ր, տա՞ր...

Վասակը սեացավ, այտի մկանները ցնցվեցին: Այն է պետք է պոռթկար՝ որ Գագիշոն արագ մոտեցավ նրան և ականջին մի կերպ լսեցնել տալով գոչեց.

— Խոհեմ եղիր, տեր մարզպան, տարաժամ է...

— Ո՞չ, պիտի կալանեմ այդ խելագարին...մըմուաց Վասակը կատղած:

— Հետ կաց, տեր իմ, — ընդդիմացավ Գագիշոն:

Վասակը նժույգը քշեց Ղեռնդ երեցի զեմ և կանգնեց ընդհաւպ նրա առաջ:

— Ո՞ւր ես տանում ժողովուրդը, — հարցըրեց նա:

Բայց նրա ձայնը խլացավ բազմության որոտի մեջ:

— Քեզ հետ եմ, ո՞ւր ես տանում ժողովուրդը, կրկնեց Վասակը:

— Նահատակության, տեր մարզպան: Երանի է եթե կգաս մասնառնես հանդերձյալի:

Ղեռնդ երեցը նկատեց Վասակի զեմքին չարամիտ կնճիռներ, զգաց որ նա կամենում է խափանել երթը: Արծվայլն մագիների նման ձեռքի մատներով խեց նրա նժույգի սանձը և զոչեց գողահար:

— Մի՛ կանգնիր հակառակ, այլես մեզ երկյուղալի չեն ոչ իշխան, ոչ թագավոր: Մեր խիղճն է մեզ դատավոր:

Բազմությունը սակայն չլսեց այս տրամախոսությունը և ալիք ալիք շրջապատեց նախարարներին: Վոամին սկսեց մտրակահարել աջ ու ձախ, սակայն ոչ ոք ծեծվողներից չէր զգում ոչ այդ ծեծի իմաստը, ոչ ցավը: Սկսվեց մի արտասովոր, անհասկանալի մոլուցք:

Մարդիկ վազում էին որ լնկնեն մարակի հարվածների տակ և չէին
տեսնում հակառակությունը ոչ վասակի, ոչ վռամբ կողմից։ Հե-
տեւի շարքերը ոգեսորված վասակի ներկայությունից պոչում էին,
— Օրհնյա՛լ լինես, նահատակ :

Իսկ Ղեռնդ Երեցը ցնցում էր նժույգի սանձը և չնայած վա-
սակի ճիպերին հեռացնել նրան, ինչպես նաև նժույգի խրանե-
լուն՝ ոգորում էր.

— Ե՛կ նահատակ, առաջնորդի՛ր ժողովուրդը հավատի պատե-
րազմին :

Հանկարծ բաղմությունը ցնցվեց և հազարավոր դեմքեր դար-
ձան գեպի դիմացը, Այնտեղից հորձում էր մի ավելի մեծ բաղ-
մություն, որի գլուխ էին անցել Վարդանը և մյուս նախարարնե-
րը։ Ավից գուշա ելած լայնածավալ լավայի պես, որ վրա հոսելով
լափում է ամեն ինչ և աջ ու ձախ բազուկներ արձակում ու խու-
ժում փոսերն ու անցքերը՝ բազմությունը ալիք ալիք եկավ խառ-
նվելու Ղեռնդ Երեցի զանգվածին։ Վարդան Մամիկոնյանն ու նա-
խարարները գալիս էին զանգվածի ուժով մղված։ Վարդանը ա-
հեղ կերպարանքով նայեց վասակին և բաղմության հետ հոսեց
գեպի նա։ Վոամը քաշվեց դեպի Վասսկը, Գաղիշոն ձեռը բարձ-
րացրեց բազմության վրա՝ հանդարտեցնելու շարժումով։ Բազմու-
թյունն իրար լափելով միացան երկու ծովի պես և կուլ տպին նա-
խարարներին։ Վասակը սարսափեց և սարսուաց :

— Տե՛ր մարզպան, ո՞չ ենք կարող ընդդեմ զնալ Աստծուն և
աշխարհին։ մի՛ կանգնիր հանդիման, — գոչեց Վարդանը։ Բազմու-
թյունը կատաղի թափով օրորվեց, քանդվեց ու բեկոր եկավ սեղ-
մեց Վասակին։ Դոռոց էր միայն լսվում, մի անընդհատ, ջրվեժի
ահեղադդորդ գոռոց, որ սպասնում էր ոչնչացնել՝ եթէ միայն —
վայ Վասակին — մի ակնթարթ կասկածեր նրա հակառակության,
Վասակը շարժում արեց որ նժույգն ազատի Ղեռնդ Երեցի մա-
գիներից, սակայն իզուր եղան նրա ջանքերը։ Նրա նժույգը սեղ-
մըվել էր արդեն բազմության զանգվածի մեջ ինչպես խրված լի-
ներ նա ուժով կուլ տվող մորուտի մեջ։ Նժույգը փնչացնում
ծառս էր ելնում, կոխկրտում էր մարդկանց ոտները։ Մարդիկ
մոլեգնած ոչինչ չէին զգում, իսկ չորս կողմից ավելի, ու ավելի
Ճնշում էին հեռավոր ալիքները։

Վարդանը գլխով նշան արեց բազմության շարժվելու դեպի
Մասիսի կողմի փողոցով։

— Առա՞ջ, առա՞ջ, — որոտաց բազմությունը և հոսանք առավ

դեղի հարավային դռուլ Վազարշապատի պարխսպների։ Հռոանքը
 տարագ բոլորին, ինչպես նաև Վասակին, որի նժույզի սանձին
 կպել էին պողպատի մատները Ղեռնդ Երեցի։ Վասակը սարսափից
 համակերպված գնաց առաջ և դադարեց լնդդիմանալուց։ Նրա կա-
 տաղությունը ճնշվել էր կենդանական սարսափից։ Նա նոր հաս-
 կացավ, որ իր կյանքը վտանգված է, և սմքեց։ Նա նման էր որ-
 սորգներից խիտ շարքով օղակված կատաղի գայլի, որ սարսափից
 անդիմադիր մղվում է առաջ գեպի մահ։ Նա ջանում էր չնայել
 Գագիշոյին, որից ամաչում էր իր այս անօրինակ նվաստացման հա-
 մար։ Միայն իր հետեւից զգում էր Վասմի մանչոցները։ Երբեմն
 նո հատուկուր լսում էր Գագիշոյի ձայնը։ Նախարարը խոսում էր
 Վասմի հետ ինչպես հավասարի հետ։ Այս բանն ավելի ազգեց
 Վասակին, և երկուողը ավելի թափանցեց նրա սլքար։ Մարդիկ
 հավասարվում են և հասարականում մեծ վտանգների պահին։

ԲԱՌԵՐ

- Մարզպան.**— Փախարքայ։
Թեզիկուած (թիզկուի)։— Թնջուկ ըլլալ, իրաբու մէջ աեցնել։
Կալանիկ.— Զերբակաւել, կապել։
Հանդերձեալ.— Գալիք, ապագայ։
Մոլոցք.— Մոլեգնութիւն, կատազութիւն։
Ոզորիլ.— Կռուիլ, պայքարիլ։
Ցարձել.— Ցորձանքի պէս հօսիլ, խուժել։
Մարտ.— Ճախճախուտ։



Գ Ե Ա

Գրական ստեղծագործութեան նոր բայց ամէնէն աւելի տաքածուած ձեւն է վէպը կամ ՌՈՒՄԱՆԸ:

Վէպը իր ծագումը կ'առնէ դիւցազներգական բանաստեղծութենէ, սակայն, փոխանակ չափածոյ խօսի, սովորութիւն դարձած է խօսքի արձակ ձեւը գործածել վէպի համար:

Վրագրողը, իր կողմէ ստեղծուած տիպար անձնաւորութիւններու կեանքին ու գործունէութեան պատմութեամբ, կու տայ գեղարուենատական պատկերը հասարակական կեանքի: Հետեւարար վէպի նպատակն է նկարագրել մարդկային ամէն դասակարգի բարքը, թէ՛ անցեալ և թէ՛ ներկայ, բոլոր իր լուսաւոր ու խաւոր կողմերով:

Միջին Դարու մէջ զրի առնուած առաջին վէպերը ասովեսական բումաններ էին, պատմելու համար այս կամ այն ասպետի ծագումը, դաստիարակութիւնը, իրրեւ մանկլաւիկ և իրրեւ զինակիր ունեցած ծառայութիւնները և ասպետական սիրազործութիւնները:

ԺԶ. դարուն, Փրանսացի Ռապրիկ և սպանիացի Սերվանիս հիմը դրին երգիծական վէպի: Քաջածանօթ ստեղծագործութիւն է Սերվանթեսի Տօն Քիխօրը:

Հետագային գրուած են նաեւ բարոյախօսական, կենցաղական և այլ տեսակի վէպեր, ընդհանրապէս նիւթ ունենալով ժամանակակից կեանքը:

Պատմական կը կոչուի այն վէպը, որ կարելի ճշգրտութեամբ կը պատկերացնէ ո՛չ թէ ժամանակակից, այլ անցեալ կեանքը, հիմնելով պատմութեան, պատմութեան յիշատակարաններու և ժողովրդական բանաւոր արտազրութիւններու ուսումնասիրութեան վրայ:

Պատմական վիպասանութեան մը լնթերցումով կարելի է գաղափար կազմել ամբողջ դարաշրջանի մը կեանքին:

Պատմական վէպի հիմնադիրն է անգլիացի Ուոլթը Սքօթ (1771—1832):


Հայոց մէջ նշանակելի են իրրեւ պատմական վէպի հեղինակներ, Ռաֆֆի, Ծերենց, Մուրացան, Դերենիկ Դէմիքնեան, Ստ. Զօրեան:

Քաղուած Հ. Առաքելեանի

«ՏՐԱՄԲ. ՀՈԴԵԲ. ու ԲԱՆԱՀԻՒՄԹ. ԶԵՄՆԱՐԿ» էն

Կողմը գծագրեց՝ ԱԲՐՈՀԱՄ ԶԱՂ

A II
89372



ԳԱԱ Դիմնալու Գիտ. Գրադ.

Տպարան ԱՅԻ, Աւետիս Էմիկնեան, Սալիպէ փ



220089372